

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

----- 2018 թվականի N ----- Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 թվականի ՀՈՒԼԻՍԻ
16-Ի N 767-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70 հոդվածով՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի <<Աղվան Արզումանյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> N 767-Ա որոշման մեջ <<2017 թվականի ծմեռային>> բառերը փոխարինել <<2018 թվականի ծմեռային>> բառերով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

1. Ընթացիկ իրավիճակը

Աղվան Գագիկի Արզումանյանը, ծնված 1988 թվականի նոյեմբերի 6-ին /հասցե՝ ք. Վանաձոր, Նարեկացու 4-րդ փակուղի., տուն 2/, 2006 թվականին ընդունվել է ՌԴ ազգերի բարեկամության համալսարան, որտեղ ուսանելու համար ՀՀ կառավարության 22.03.2007 թվականի N 320 որոշմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացել է տարկետում մինչև ուսումնառության ավարտը՝ 2011 թվականի աշնանային զորակոչ: Նույն բուհի կլինիկական ինտերնատուրայում /պետպատվեր/ մանկահասակների ստոմատոլոգիա մասնագիտությամբ ուսումնառությունը շարունակելու համար ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1875-Ա որոշմամբ Ա. Արզումանյանին տրվել է տարկետում մինչև 2012 թվականի աշնանային զորակոչ: Իսկ կլինիկական օրդինատուրայում /մանկական ատամնաբուժություն /օրթոդոնտ/ մասնագիտությամբ/ ուսումնառություն ստանալու համար նրան տրվել է տարկետում ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 16-ի N 30-Ա որոշմամբ: Ներկայումս նա ուսուցումը շարունակում է նույն բուհի ասպիրանտուրայում, որտեղ ուսանելու համար տարկետում տրամադրելու դիմումը նա ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացրել 2014 թվականի հուլիսի 29-ին: Բուհի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն ուսումնառության ժամկետը սահմանված էր մինչև 2017 թվականի ձմեռային զորակոչ: Նույն թվականի սեպտեմբեր ամսից սահմանված կարգով սկսվել է տարկետման գործընթացը, որը տևել է մինչև 2015 թվականի հունիս ամիսը: Նշված ժամանակահատվածում Ա. Արզումանյանը գտնվում էր Հայաստանի Հանրապետությունում և չէր կարող մասնակցել դասընթացներին, որի հետևանքով համալսարանից հեռացվելու խնդիր էր առաջացել: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը Ա. Արզումանյանը բուհում 1 տարով ձևակերպել է ակադեմիական արձակուրդ՝ մինչև ՀՀ կառավարության կողմից պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու որոշման ընդունումը: ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի N 767-Ա որոշմամբ նրան տրվեց տարկետում՝ մինչև 2017 թվականի ձմեռային զորակոչ, որն արդեն իսկ վերոնշյալ հանգամանքներից ելնելով ժամանակավրեպ էր:

Ներկայումս ՀՀ կրթության և գիտության նախարարություն է դիմել Ա. Արզումանյանը <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան իրեն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրված տարկետումը երկարաձգելու խնդրանքով՝ մինչև 2018 թվականի զորակոչ:

2.Անհրաժեշտությունը և ակնկալող արդյունքը

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ Ա. Արզումանյանին հնարավորություն կընձեռվի ավարտել լավագույն բուհերից մեկը և ստացած գիտելիքները ներդնել Հայաստանի Հանրապետությունում ոլորտի զարգացման համար:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի N 767-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ պաշտպանության և ՀՀ արդարադատության նախարարությունների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների մասին

Նախարարության անվանումը	Դիտողություններ և առաջարկություններ	Նշումներ կատարման վերաբերյալ
<p align="center">ՀՀ պաշտպանության նախարարություն</p>	<p align="center"><<Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի N 767-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չունենք:</p>	<p align="center">Ընդունված է:</p>
<p align="center">ՀՀ Նախագահի աշխատակազմ</p>	<p>Ի պատասխան Ձեր 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 01/10/16087-17 գրության՝ «ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի N 767-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ համաձայն ենք ՀՀ պաշտպանության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 1-ի Պն/510-1529 գրությունում արտահայտված դիրքորոշման հետ:</p>	<p align="center">Ընդունված է :</p>
<p align="center">ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p align="center">Համապատասխանում է գործող օրենսդրությանը:</p>	<p align="center">Ընդունված է</p>